ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«01» «Հոկտեմբերի» 2022 թ. № 382-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 482-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Անտառների մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ձևերը հաստատելու մասին» N 482-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի հավելվածի ***<u>Ձև N 1 – ԱՎ, Ձև N 2-Պ, Ձև N 3-Մ, Ձև N 4-ԱԽ, Ձև N 6-Հ, Ձև N 11-Ա, Ձև N 12-ԱՏ</u>*** ***ձևերում*** «բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ ըստ բնության հատուկ պահպանվող տարածքների» բառերը փոխարինել «բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության կողմից՝ ըստ բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների» բառերով:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

11/1/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«01» Հոկտեմբերի 2022թ.

ք. Երևան